Հիմքում ունենալով նաև 1-ին չափաբաժնի մասով ապրանքի արժեքի վերաբերյալ ներկայացված հաշվարկը, ինչպես նաև այն, որ Պատասխանողի կողմից չի ներկայացվել հայցադիմումի պատասխան, ինչպես նաև որևէ ապացույց, որով կհիմավորվեր հակառակը, Դատարանն արձանագրում է, որ 1-ին չափաբաժնի մասով ապրանքի համար հայտով առաջարկված գինն (ապրանքի արժեք, փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսեր) ինքնարժեքից պակաս է եղել, հետևաբար ներկայացված հայտը չի համապատասխանել հրավերով նախատեսված պայմաններին, ինչը պետք է հիմք հանդիսանար գնահատող հանձնաժողովի համար հրավերի այդ պահանջի անհամապատասխանությունն արձանագրելու, հետևաբար և հայտն անբավարար գնահատելու ու մերժելու համար:

Դատարանն ընդգծում է նաև այն, որ քննարկվող չափաբաժնի մասով սահմանված գնման գնի, Հայցվորի կողմից առաջարկված արժեքի և մյուս մասնակիցների կողմից առաջարկված գնի համադրության արդյունքում գնահատող հանձնաժողովը կարող էր հետևության հանգել Հայցվորի կողմից առաջարկվող գնի՝ ինքնարժեքից պակաս լինելու փաստի վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման:

Միաժամանակ, Դատարանն անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է բավարարման, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի պետք է բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

ՎՃՌԵՑ

«ԲԵԳՄԻՔ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրիի համայնքի՝ Գյումրու համայնքապետարանի կարիքների համար կոմունալ

տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱ-ԱՊՁԲ-40/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից 30.09.2025թ. տեղի ունեցած նիստի թիվ 03 արձանագրությամբ «ԲԵԳՄԻՔ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ժանաչել Գյումրու համայնքապետարանի կարիքների համար կոմունալ տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱ-ԱՊՁԲ-40/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից 30.09.2025թ. տեղի ունեցած նիստի թիվ 03 արձանագրությամբ «ԲԵԳՄԻՔ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

ՀՀ Շիրակի մարզի Գյումրիի համայնքից հօգուտ «ԲԵԳՄԻՔ» ՍՊԸ-ի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Digitally signed by GRIGORYAN TIGRAN
4008820477
Date: 2025.12.01 11:56:38 AMT

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE17-B63D-4B05-8D12 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը: